



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Անդրեասյանը, Վահե Անտոնյանը, Անուշ Ասատրյանը, Արթուր Ավանեսյանը, Նունե Աֆրիկյանը, Արամ Գասպարյանը, Արման Թադևոսյանը, Կարինե Թովմասյանը, Սայեն Հայրապետյանը, Կարապետ Մեսրոպյանը, Մելիք Նազարյանը, Անի Նահապետյանը, Էլմիրա Ոսկանյանը, Նվարդ Սարգսյանը, Նահիրա Վանյանը, Ելիզավետա Օհանջանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Լուսինե Աստաբացյան, Արմինե Կոստանյան, Տիգրան Բաբախանյան, Լեվոն Գրիգորյան, Հասմիկ Ավետիսյան, Սիրանուշ Իսկանդարյան, Արմենուհի Հակոբյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Լուսինե Աստաբացյանը

Նիստը չկայացավ քվորում չլինելու պատճառով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ԱՍՏԱԲԱՑՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 04-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 298-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 35-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՍԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

7. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
13. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
14. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
15. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՅՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
16. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԼԵՎԻՆԵ ՀԱՅԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
17. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
18. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԲԱԳՐԱՏ ԱԼԲԵՐՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
19. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԳԵՎՈՐԳ ՌԱՖԻԿԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
20. ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
21. ԱՐՏԱԿ ԷԴԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
22. ԳԵՎՈՐԳ ԱՐԿԱԴՅԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
23. ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐԱՄԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24. ՀՈՎԻԿ ՀԱԿՈՔԻ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25. <<ԷՄ ԶԻ ԲԵՏՈՆ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, „Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ (հաղորդումը կցվում է) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել ի գիտություն Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման արդյունքների վերաբերյալ հաղորդումը՝ ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի:
բ/ ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 298-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, „Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի „Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 35-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀԱԿՈՐՅԱՆ/

„Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը և ելնելով հաստիքացուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունից Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 14-ի N 35-Ա որոշմանը կից հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածը կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՍԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Մասիս համայնքի բնակիչ Արսեն Մամիկոնի Ալեքսանյանի դիմումը և պատվոգրերը /01.08.2023թ. մտից N 9880/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարին՝ Կարս քաղաքում անցկացված մարտեր առանց կանոնների (MMA) մրցաշարին 66 կգ քաշային կարգում 1-ին պատվավոր տեղը զբաղեցրած, Վրաստանի հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիում կայացած ազատ ոճի մարտարվեստում (COMBAT KARATE K-1) մրցաշարին 60 կգ քաշային կարգում 1-ին պատվավոր տեղը զբաղեցրած և պրոֆեսիոնալ «Արմֆայթինգ» ֆեդերացիայի կողմից կազմակերպված «ընդհանուր մենամարտեր» ՀՀ առաջնությունում 70 կգ քաշային կարգում 1-ին պատվավոր տեղը զբաղեցրած Արսեն Մամիկոնի Ալեքսանյանին սեպտեմբեր ամսին Իտալիայում կայանալիք մարտեր առանց կանոնների եվրոպայի առաջնությանը մասնակցելու համար հատկացնել սոցիալական աջակցություն 500.000 ՀՀ դրամ:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՐՈՒՅՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով կադաստրի կոմիտեի հասցե տրամադրելու մասին որոշումների քաղվածքները՝ /ծածկագիր 030202CABXZ8, 03020QLYUVXX, 03020A4MZTFE, 03020GDNYXWB, 030208PGDUTZ/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Մասիս համայնքի Արևաբույր բնակավայրի նորաստեղծ բնակելի թաղամասում փողոցներն անվանակոչել համաձայն կադաստրի կոմիտեի կայացրած հասցե տրամադրելու մասին որոշումների՝

1. Մասիս, գյուղ Արևաբույր, Շառլ Ազնավուրի - ծածկագիր 030202CABXZ8,
2. Մասիս, գյուղ Արևաբույր, Միեր Մկրտչյան - ծածկագիր 03020QLYUVXX,
3. Մասիս, գյուղ Արևաբույր, Ազատամարտիկների- ծածկագիր 03020A4MZTFE,
4. Մասիս, գյուղ Արևաբույր, Սամվել Հակոբյան- ծածկագիր 03020GDNYXWB,
5. Մասիս, գյուղ Արևաբույր, Համազասպ Բաբաջանյան - ծածկագիր 030208PGDUTZ:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N431-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ և 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն Մասիս համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը առ 01.07.2022 թվականի դրությամբ (կից հավելված 1):

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՀ Հողամասերի պետական հաշվառման կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 656 որոշման 9-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ընթացիկ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմած համայնքի հողային հաշվեկշռին /կից հավելված 1/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 16-ի <<ՄԱՐՏԻՐՈՍ ԳԵՂԱՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 144-Ա որոշման 1-ին կետում գրառված „Այնթապ,, բառը փոխարինել „Նոր Խարբերդ,, բառով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի պահանջներով, հիմք ընդունելով Մասիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք ք. Մասիս Դպրոցականների փողոց 1/1 հասցեում գտնվող գույքը /արժեք՝ 100000 ՀՀ դրամ / կոյուղատար դիտահոր - L= 5.7մ D =200մմ , ջրագիծ դիտահոր L= 3.0մ D= 63մմ, /պետական գրանցման վկայական N 21072023-03-0088/ նվիրատվությամբ տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեին:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Կորյուն Հովակիմյանի Վա Արմեն Եղյանի դիմումը/մտից՝ 06.07.2023թ. թիվ 953/, Սիս համայնքի ղեկավարի և Կորյուն Հովակիմյանի միջև 18.12.2003 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Սիս բնակավայրի 03-083-0510-0015 ծածկագիրը կրող 4,75 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Կորյուն Մկրտիչի Հովակիմյանի կողմից վարձակալված՝ Մասիս համայնքի Սիս բնակավայրում գտնվող 03-083-0510-0015 ծածկագրով 4,75 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքի հողամասը / վկայական N 06072023-03-0077/, թույլատրել տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքով 1 հա-ը 992500 դրամ՝ ընդհանուր 4 714 375 ՀՀ դրամ, գնման նախապատվության իրավունքով, մեկ տարվա ընթացքում ուղղակի վաճառքով օտարել Կորյուն Մկրտիչի Հովակիմյանին:

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՍ**

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Անդրանիկ Հարությունյանի դիմումը/մտից՝ 30.05.2023թ. թիվ 7025/, Մարմարաշեն համայնքի և Անդրանիկ Գարեգինի Հարությունյանի միջև 22.03.2016 թվականին կնքված ս/մ 547 վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մարմարաշեն բնակավայրի 03-058-0221-0006 ծածկագիրը կրող 2,0 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Անդրանիկ Գարեգինի Հարությունյանի կողմից վարձակալված՝ Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրում գտնվող 03-058-0221-0006 ծածկագրով 2,0 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող /անջրդի/ հողատեսքի հողամասը / վկայական N 07072023-03-0065/, թույլատրել տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքով 1 հա-ը 1185000 դրամ՝ ընդհանուր 2 370 000 ՀՀ դրամ, գնման նախապատվության իրավունքով, մեկ տարվա ընթացքում ուղղակի վաճառքով օտարել Անդրանիկ Գարեգինի Հարությունյանին:

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Արթուր Հախվերդիյանի դիմումը/մտից՝ 20.06.2023թ. թիվ 7970/, Սիս համայնքի և Արթուր Շահումի Հախվերդիյանի միջև 04.07.2012 թվականին կնքված թիվ 1600 /ս/մ 669/ վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Սիս բնակավայրի 03-083-0108-0007 ծածկագիրը կրող 1,48886 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Արթուր Շահումի Հախվերդիյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի Սիս բնակավայրում գտնվող 03-083-0108-0007 ծածկագրով 1,48886 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքի հողամասը /վկայական N26072023-03-0098/, թույլատրել տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքով 1 հա-ը 67500 դրամ՝ ընդհանուր 100 498 ՀՀ դրամ, գնման նախապատվության իրավունքով, մեկ տարվա ընթացքում ուղղակի վաճառքով օտարել Արթուր Շահումի Հախվերդիյանին:

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆՍ**

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Արարատ Եղյանի դիմումը /մտից՝ 20.06.2023թ. թիվ 7972/, Սիս համայնքի և Արարատ Անդրանիկի Եղյանի միջև 25.07.2013, թվականին կնքված թիվ /ս/մ 1709/ վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Սիս բնակավայրի 03-083-0108-0019 ծածկագիրը կրող 1,92955 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Արարատ Անդրանիկի Եղյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի Սիս բնակավայրում գտնվող 03-083-0108-0019 ծածկագրով 1,92955 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքի հողամասը / վկայական N 26072023-03-0050/, թույլատրել տվյալ պահին:

դրամ, գնման նախապատվության իրավունքով, մեկ տարվա ընթացքում ուղղակի վաճառքով օտարել Արարատ Անդրանիկի Եղյանին:

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 2 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0001 կադաստրային ծածկագրով, 0.10335 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.2 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 4 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0002 կադաստրային ծածկագրով, 0.09828 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.3 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 6 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0003 կադաստրային ծածկագրով, 0.09925 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.4 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 10 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0005 կադաստրային ծածկագրով, 0.08953 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.5 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 12 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0006 կադաստրային ծածկագրով, 0.08986 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.6 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 18 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0009 կադաստրային ծածկագրով, 0.09209 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.7 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 20 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0010 կադաստրային ծածկագրով, 0.09291 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.8 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 22 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0011 կադաստրային ծածկագրով, 0.09366 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.9 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 24 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0012 կադաստրային ծածկագրով, 0.09442 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.10 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 28 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0014 կադաստրային ծածկագրով, 0.09607 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.11 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 30 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0015 կադաստրային ծածկագրով, 0.09757 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.12 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 32 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0016 կադաստրային ծածկագրով, 0.09915 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.13 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 34 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0017 կադաստրային ծածկագրով, 0.10073 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.14 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 36 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0018 կադաստրային ծածկագրով, 0.10112 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.15 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 38 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0019 կադաստրային ծածկագրով, 0.10207 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.16 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 42 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0021 կադաստրային ծածկագրով, 0.10511 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.17 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 17-րդ փողոց, 44 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0022 կադաստրային ծածկագրով, 0.12233 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ,

1.18 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արգավանդ, Գետափնյա փողոց, 4/1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 03-018-0255-0032 կադաստրային ծածկագրով, 0.19778 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 10513.8 ՀՀ դրամ:

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԼԵՎԻՆԵ ՀԱՅԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Լևինե Ալեքսանյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Նոր թաղամաս 2/23 հասցեում գտնվող օժանդակ շինությունների (մակերեսը՝ 22,4քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.01151

(ծածկագիր՝ 03-003-0137-0723) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Լևինե Հայկի Ալեքսանյանին:

2.Շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 103757 (հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ:

3.Շինությունների զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 786 628 (յոթ հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ:

4.Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Կարինե Մանուկյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղամաս 2/25 հասցեում գտնվող օժանդակ շինությունների (մակերեսը՝ 28,1քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.00281 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-003-0109-0223) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Կարինե Ավետիսի Մանուկյանին:

2.Շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 65080 (վաթսուհինգ հազար ութսուն) ՀՀ դրամ:

3.Շինությունների զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 192044 (հարյուր ինսուններկու հազար քառասունչորս) ՀՀ դրամ:

4.Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԲԱԳՐԱՏ ԱԼԲԵՐՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Բագրատ Գասպարյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Նոր թաղամաս 6/16 հասցեում գտնվող օժանդակ շինությունը, ավտոտնակը և պարիսպը (ընդհանուր մակերեսը՝ 84.7քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.01197 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-003-0128-0945) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Բագրատ Ալբերտի Գասպարյանին:

2.Շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 287880 (երկու հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

3.Շինությունների զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 818066 (ութ հարյուր տասնույթ հազար վաթսունվեց) ՀՀ դրամ:

4.Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԳԵՎՈՐԳ ՌԱՖԻԿԻ ԲԱՂՂԱՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Գևորգ Բաղրամյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, գ. Գետափնյա, 1-ին փողոց 12 հասցեում գտնվող բնակելի տունը և պարիսպը (ընդհանուր մակերեսը՝ 102.55քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.0281 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-030-0038-0005) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Գևորգ Ռաֆիկի Բաղրամյանին:

2.Շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 686768 (վեց հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր վաթսունույթ) ՀՀ դրամ:

3.Շինությունների զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 1248146 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունութ հազար հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ:

4.Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

ԷՂԳԱՐ ԳԵՎՈՐԳԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Էղգար Սուքիասյանի դիմումը՝ /հայտ՝ 02.07.2023թ. N 9910/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Խաչփար բնակավայրում գտնվող Էղգար Գևորգի Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0113-0151 կադաստրային ծածկագիրը կրող, 0.08034 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, վարելահող հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ անասնապահական տնտեսություն կառուցելու նպատակով:

ԱՐՏԱԿ ԷՂԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Արտակ Գրիգորյանի դիմումը՝ /հայտ՝ 22.06.2023թ. N 8107/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Այնթապ բնակավայրում գտնվող Արտակ Էղիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 03-012-0309-0003 կադաստրային ծածկագիրը կրող, 0.2774 հա մակերեսով գյուղատնտեսական

նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

**ԳԵՎՈՐԳ ԱՐԿԱԴՅԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Գևորգ Դանիելյանի դիմումը /հայտ՝ 22.06.2023թ. N 9668/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Դարակերտ բնակավայրում գտնվող Գևորգ Արկադայի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող 03-035-0148-0005 կադաստրային ծածկագիրը կրող, 0.4984 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, կորիզավոր, վարելահող հողատեսքերի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

**ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐԱՄԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Վարուժան Գալստյանի դիմումը /մտից՝ 21.07.2023թ. N 9391/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Դարակերտ բնակավայրում գտնվող Վարուժան Արամի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող 03-035-0007-0026 կադաստրային ծածկագիրը կրող, 0.080 հա մակերեսով բնակավայրերի նպատակային, բնակելի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Հովիկ Արշակյանի դիմումը՝ /մտից՝ 31.07.2023թ. N 9792/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Սայաթ Նովա բնակավայրում գտնվող Հովիկ Հակոբի Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող 03-082-0310-0007 կադաստրային ծածկագիրը կրող, 3,23173 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, վարելահող հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ձկնաբուծական տնտեսություն կառուցելու նպատակով:

<<ԷՄ ԶԻ ԲԵՏՈՆ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով <<ԷՄ ԶԻ ԲԵՏՈՆ>> ՍՊԸ տնօրեն Հովիկ Արշակյանի դիմումը՝ /մտից՝ 31.07.2023թ. N 9792/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Սայաթ Նովա բնակավայրում գտնվող <<ԷՄ ԶԻ ԲԵՏՈՆ>> ՍՊԸ- ին սեփականության իրավունքով պատկանող 03-082-0310-0003 կադաստրային ծածկագիրը կրող, 3,0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, վարելահող հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ձկնաբուծական տնտեսություն կառուցելու նպատակով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Սպարտակ Գասպարյանի դիմումը/մտից՝ 28.07.2023թ. թիվ 9744/, Մասիսի քաղաքապետարանի և Սպարտակ Գասպարյանի միջև 28.02.2006 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մասիս քաղաքի, Հրանտ Վարդանյան փողոց, 2/4 հասցեում գտնվող 0,010501 հա, ծածկագիր՝ 03-003-0296-0498 և Հրանտ Վարդանյան 2/5 հասցեում գտնվող 0,14030հա, ծածկագիր 03-003-0296-0499 հողամասերը չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Սպարտակ Պարույրի Գասպարյանի կողմից վարձակալած հողամասերը թույլատրել տվյալ պահին գործող հողի կադաստրային 1քմ-ը 1221 դրամ արժեքով գնման նախապատվության իրավունքով, մեկ տարվա ընթացքում ուղղակի վաճառքով օտարել վարձակալին՝ Սպարտակ Պարույրի Գասպարյանին:

1. ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց, 2/5 հասցեում գտնվող 0,14030հա բնակավայրերի հասարակական կառուցապատման և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների նշանակության հողամասը /ծածկագիր՝ 03-003-0296-0499 վկայական N 02082023-03-0024/, ընդհանուր 1 713 063 ՀՀ դրամ,
2. ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց, 2/4 հասցեում գտնվող 0,10501հա բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը / ծածկագիր՝ 03-003-0296-0498, վկայական N 02082023-03-0053/, ընդհանուր 1 282 173 ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ



ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Signature

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signature

ՋՈՂՐԱԲ ՕՍԵՅԱՆ

Signature

Համայնքի ղեկավար

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Նիսպոն արձանագրեց՝

Լուսինե Աստաբացյանը

Signature